



Արամայիս Միրզախանյան, Ստոքհոլմ, Շվեդիա, 25 Նոյեմբեր, 2010



Անպայման մասնակցել թելեթոնի դրամաշնորհին, սակայն այն քաջ գիտակցությամբ, որ այն եղանակներով ազգ ու երկիր պահել չի լինի...

Արամայիս Միրզախանյան, Ստոքհոլմ, Շվեդիա, 25 Նոյեմբեր, 2010



Անպայման մասնակցել թելեթոնի դրամաշնորհին, սակայն այն քաջ գիտակցությամբ, որ այն եղանակներով ազգ ու երկիր պահել չի լինի...

ARMENIA Fund-ն ու սփյուռքի բազմաթիվ հայ կազմակերպություններ իրենց հնարավորություններն ու կարելիությունները երբեք չեն խնայում Հայաստանին ու իրենց ժողովրդին օգտակար լինելու համար: Այս մասին խոսելն ավելորդ է, բազում են փաստերը...

Վերը բերված՝ ձեռքերը առ երկինք պարզած օգնություն հայցող հայ երեխաների սրտածմլիկ ու միևնույն ժամանակ իշխանությունների դեմ զայրույթ առաջացնող պատկերը, պետք է, որ ցավի ու ամոթի զգացում առաջացնի առաջին հերթին անկախ Հայաստանի հանրապետության իշխանությունների և ապա՝ բովանդակ հայության մոտ:

Այսպիսի՝ գուր ընդհատ կարեկցանք շարժող պատկերներ հաճախ ենք տեսնում մեր հեռուստատեսիլների պաստառի վրա՝ Աֆրիկայի գաղութացված երկներից, որտեղ Կարմիր խաչը օգնության կոչ է անում... Հասանք Աֆրիկայի մակարդակին... Օլիգարխներն ու նրանց հետ սերտորեն կապված «ազգի ընտրյալները» այս թշվառ վիճակին հասցրեցին երկրն ու ժողովրդին:

Թելեթոն կազմակերպելն ու ըստ կարողության գումար տալը, բարեգործություն է, բայց ոչ հարցի լուծում: Ինչո՞ւ սփյուռքի բողոքի ձայնը չի լսվում: Ինչո՞ւ ազգապահպանման լուրջ պահանջ չի ներկայացվում Հայաստանի պետականությանը տիրացած իշխանավորներին...

Սփյուռքի գիտակից խավի լուռությունը մեղսակցություն է ...

